

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2019-2023թթ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է համայնքի ավագնու 22.01.2019թ թիվ 8-Ա որոշմամբ

Համայնքի ղեկավար

Կ.Գևորգյան

Ներքին Գետաշեն – 2019թ.

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի զարգացման հինգամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է առաջիկա հինգ տարիների ընթացքում ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Համայնքի ներդաշնակ զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով առաջիկա հինգ տարիներին հինգամյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ն. Գետաշեն համայնք

Մարզկենտրոնը – Գավառ

Ն. Գետաշեն համայնքի տեսչականը

Ն. Գետաշեն ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր

սոցիալ-տնտեսական, կենցաղային, հոգևոր-մշակութային խնդիրները

գտնում են իրենց լուծումը, համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների

իրականացմանը, ինչպես նաև լրացնելու իր գիտելիքների, հմտությունների և փորձի պակասը:

Ներքին Գետաշեն գյուղը վերաբնակեցվել է 1828-1829թթ. : Բնակիչները գաղթել են Արևմտյան Հյաստանի Բայազետի վիլայեթի Ալաշկերտ գավառից:

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 2007մ բարձրության վրա:

Գյուղի կլիման ծմռանը ցրտաշունչ է , ամռանը՝ զով: Հաճախակի լինում է չորային տարի, որից երբեմն տուժում է թե գյուղատնտեսությունը և թե գյուղացին:

Գյուղում ապրում են 9010 բնակիչներ, որից տղամարդիկ կազմում են բնակչության 51%-ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0-6 տ) - 700
2. Ղարոցական (6-17 տ) - 1320
3. 18-65 տարեկան - 4000
4. թոշակառուներ - 650
5. հաշմանդամներ - 330
6. աշխատունակներ - 3500
7. փախստականներ - -
8. գործազուրկներ - 2100
9. ընտանիքների (ծխերի) թիվը - 2672
10. գրանցվածներ “փարոս” ընտանեկան նպաստների համակարգում - 460
11. գրանցված ընտրողների թիվը - 6410

Մարզկենտրոնից գտնվում է 28 կմ հեռավորության վրա, Վարդենիս քաղաքից՝ 30

կմ: Այստեղով են անցնում Երևան-Վարդենիս ավտոճանապարհը:

Գյուղը ծովի մակարդակից բարձր է շուրջ 2000մետր, վարչական տարածքը կազմում է 2578.49 հա, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ:

Տարեկան տեղումների քանակը կազմում է 250-ից 350 մմ, վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն և կարկտահարություն: Գյուղը չունի հարթ մակերես:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 213.086.000 ՀՀ դրամ , որի մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 14.4տոկոս:

Համայնքը չի դասվում գյուղատնտեսական մթերքներ արտադրող գյուղերի շարքին:

Այգիները հիմնականում հիմնվել են ավելի քան 40 տարի առաջ և ներկայումս չեն ծառայում իրենց նպատակին, իսկ վարելահողերի մեծ մասը ռոտզման ջրի սղության, հողի ոչ բերրի լինելու հետևանքով դարձել են արոտներ, քանի որ որպես անջրդի վարելահող օգտագործելը եկամտաբեր չէ և արդյունքում համայնքի գյուղացիական տնտեսություններից տարիների ընթացքում հող մշակողների թիվը կրճատվել է :

Ոռոգման համակարգերի կապիտալ նորոգումը և ոռոգման ջրի առկայությունը շատերին հնարավորություն կտա զբաղվելու գյուղատնտեսությամբ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մարտի 23-ի թիվ 455-Ն որոշմամբ համայնքի տարածքում գտնվող հողերն անհատույց հանձնվել են համայնքին և հանդիսանում են համայնքային սեփականություն:

Համայնքի վարչական տարածքը 2578.49 հա է, որից 1079.97 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում վարելահողեր՝ 539.18 հա, արոտավայրեր՝ 470հա, խոտհարկեր 13.97հա,այլ հողատեսքեր 56.82 հա:

2018 թվականի ընթացքում համայնքում գյուղատնտեսական ապրանքներից արտադրվել է հիմնականում 1767 տոննա բանջարեղեն, 1181,0 տոննա պտուղ և 3200,0 տոննա խոտ: 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում անասնապահության հիմնական տեսակներն են՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 2138 գլուխ, խոզեր՝ 110 գլուխ, ոչխարներ՝ 171 գլուխ, թռչուններ՝ 7500թև, մեղուներ՝ 130 մեղվաբնտանիք:համայնքում գործում է շուկա,որտեղ իրացվում է արտադրված գյուղատնտեսական մթերքների մի մասը, մնացած մասը իրացվում է հանրապետության այլ մարզերում:

Համայնքի մշակույթի տունը կարիք ունի կապիտալ վերանորոգման: Համայնքի մշակույթի տունը ունի 35 տարվա պատմություն, որը վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով վերանորոգման չի ենթարկվել: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ համայնքը չունի աշխատանքից ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայր: Համայնքի առաջնահերթ խնդիրներից է նշված կառույցի վերանորոգումն ու շահագործումը:

Համայնքի տարածքում պահպանվել է շուրջ 250 հնագույն խաչքարեր, ինչպես նաև համայնքում վերակառուցվել է “Կոթա-սուրբ Աստվածածին եկեղեցին /կառուցված 9-րդ դար/ որը հնարավորություն է տվել համայնքում զարգացնել զբոսաշրջությունը:

Ն. Պետաշենի մշակույթի տան հիմնական վերանորոգումը հնարավորություն կնձեռնի համայնքում մշակույթային կյանքի զարգացմանը: Գյուղապետարանի բյուջեից ամենամյա միջոցներ կտրամադրվի մշակույթի տան պահպանման և շահագործման համար: Վճարովի խմբակներից, մատուցվող ծառայություններից, համերգներից ու հասույթներից ստացված գումարները ամբողջովին կտրամադրվեն շենքի շահագործման նպատակով:

Գրադարանն ունի ավելի քան 7000 կտոր գրականություն: Գյուղապետարանը սատարում է վերը նշված կազմակերպություններին, աջակցում է նրանց՝իրենց գործունեությունն իրականացնելու գործում:

Համայնքի տարածքում գործում է երկու միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 1323 աշակերտ: Երկու դպրոցներում էլ գործում են նախակրթական հաստատություններ, որտեղ սովորում են շուրջ 130 երեխաներ:

Համայնքի թիվ 1միջն. Դպրոցին կից 2018թ-ց կառուցվում է Նորակառույց թաղամասում դպրոցի կառուցումը ընթացիկ հինգամյա ծրագրով նպատակահարմար չէ, քանի որ թաղամասը սակավ է բնակեցված, բնակելի տների հեռավորությունը միմյանցից զգալի է:

Համայնքում գործող կրթական հաստատությունները մշտապես գտնվում են համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Գյուղապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր խթանելու կրթության մակարդակի բարելավմանը, օժանդակելու կրթօջախների առջև ծառայած խնդիրների լուծմանը:

2018 թ-ից համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են շուրջ 150 նախադպրոցական տարիքի երեխաներ:

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բժշկական ամբուլատորիան է, որի շենքը շահագործման է հանձնվել 2002 թվականին:

Շենքը կահավորված է առաջին բուժ. օգնության անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Գյուղապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա երկու տարիների համար սահմանված հիմնական նպատակներից և արված առաջարկություններից, համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը ներառելու համայնքի 2019-2023թթ. ՀՀԶԾ -ում:

Համայնքի զարգացման 2019թթ. ՀՀԶԾ -ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազար դրամ
1	Խորքային հորի կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.-3,000
2	Համայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.-15,000
3	Համայնքի թաղամասերի գազաֆիկացում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 5,000
4	Համայնքի ոռոգման ցանցի վերանորոգում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 28000,0
5	Համայնքի ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 120.000,0
6	Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.-10.000.0
7	նոր ենթակայանի տեղադրում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 6.000.0

		գծով ԽՄ	
8			
9			
10			
11			

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափորոշիչները՝

- հանրության աջակցությունը
- ուղղակի և անուղղակի շահառուների թիվ
- հարատևություն (կենսունակություն)
- ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում
- հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն իր նիստում որոշել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առարնահերթությունները (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունների որոշումը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը(հազ. դրամ)	Գնահատման չափանիշները(0-10 բալ)						Ծրագրի առաջնահերթությունը (տեղը)
			Հանրության աջակցությունը	Ուղղակի և անուղղակի շահառուների թիվը	Ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում	Հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում	Հարատևություն(կենսունակություն)	Ընդամենը (Բալ)	
1.	Խորքային հորի կառուցում	13.000.0	8	10	6	10	9	43	1
2.	Համայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում	15,000	8	8	6	10	9	41	2
3.	Համայնքի թաղամասերի գազաֆիկացում	6,000	7	7	8	8	10	40	3
4.	Համայնքի	15,000	7	6	5	9	9	36	4

	ոռոգման ցանցի վերանորոգում								
5.	Համայնքի ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում	120,000.0	6	6	7	8	8	35	5
6.	Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	10,000.0	6	6	6	7	9	34	6
7.	նոր ենթակայանի տեղադրում	6,000.0	7	7	7	8	4	33	7
8.	Գլխավոր հատակագծի ձեռքբերում								
9.	Մշակույթի տան վերակառուցում								
10.									
11.									
12.									

Ստորև ներկայացվում է համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի վերլուծությունը և մասնագիտական եզրակացությունը աղյուսակ 7-ում թվարկված բոլոր ծրագրերի իրականացման հնարավորությունները և ՀՀԶԾ -ում դրանց ձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ՝

- Համայնքի աշխատակազմի պահպանման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ծրագրերը, ինչպես նաև գործող ՀՈԱԿ-ների կողմից մատուցվող ծառայությունները նախկին տարիներին մշտապես իրականացվել են և գալիք հինգ տարիներին նույնպես շարունակվելու են, հետևաբար դրանք համարվում են համայնքի ամենաառաջնահերթ ծրագրերը և չեն գնահատվել ծրագրերի առաջնահերթությունների որոշման բալային համակարգով:
- Սոցիալապես անապահով ընտանիքներին օգնությունների տրամադրման ծրագրերը համարվում են յուրաքանչյուր տարի կրկնվող, նույն կերպ իրականացվող և ՀՀԶԾ -ում դրանց ձևակերպման անհրաժեշտության չկա:

Համայնքի 2019-2023թթ. ՀՀԶԾ -ում ներառված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ֆինանսական ամբողջական ապահովվածությունը և իրատեսականությունը մեծապես կախված է նաև համայնքի արդյունավետ համագործակցությունից պետական կառավարման մարմինների, դոնոր կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ՝ ապահովելու վերջիններիս կողմից ակնկալվող ֆինանսական ներդրումները ՀՀԶԾ -ում ներառված համապատասխան ոլորտային ծրագրերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2019-2023թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ծրագրերի իրականացումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է սերտ համագործակցել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ՝ 2019-2023թթ-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքի մշակույթի կենտրոնի դահլիճի վերանորոգում
- Համայնքի ազգաբնակչությանը մատչելի գներով պարարտանյութերի, թունաքիմիկատների, բարձր որակի սերմացուների տրամադրում
- Նոր մանկապարտեզի կառուցում

Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:

2.4 Համայնքի բյուջեն/եկամտային և ծախսային մասով/ կազմում է 213.086.000 ՀՀ դրամ

2.5 ԶԱՐԳԱՑԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի առջև ծառայած հիմնախնդիրները հետևյալ են՝

- 1) Աշխատատեղերի ստեղծումը
- 2) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը
- 3) Մշակույթի կենտրոնի վերանորոգումը
- 4) Գյուղատնտեսության զարգացման խթանումը
- 5) Ճանապարհների ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը

6/ համայնքում չկան աշխատող արտադրական ձեռնարկություններ

7. Համայնքը գրկված է նախկինում օգտագործված հողատարածքներից

8. Ոռոգման ջրի սակավություն

Վերը նշված՝ ծրագրերի իրականացման հիմնական խոչընդոտ է հանդիսանում համայնքի ֆոնդային բյուջեի սահմանափակ լինելը: Համայնքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը գրեթե պահանջում են կապիտալ ներդրումներ: Համայնքում գործարար միջավայրի բարելավման և ձեռներեցության խթանման խոչընդոտներից են բանկերից հատկացվող վարկերի բարձր տոկոսադրույքները, հարկային արտոնությունների բացակայությունները: Դժվարություններ կան համայնքի երիտասարդության խնդիրների լուծման հետ կապված աշխատատեղերի, ակտիվ մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպման ու անցկացման հետ:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՇՎ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ

ՈՒԺԵՂ

ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքում երկու դպրոցի առկայությունը
- Համայնքում մանկապարտեզի առկայությունը
- Համայնքում մշակույթի տան առկայությունը
- Համայնքում բժշկական ամբուլատորիայի առկայությունը
- Համայնքում գազաֆիկացվածության աստիճանը
- Համայնքում բջջային օպերատորների` <<Ղ-Տելեկոմ>>, <<Բիլայն>>, <<Յուքոմ>> ընկերությունների բջջային կայանների առկայությունը
- Համայնքի տարածքում պատմամշակութային հուշարձանների առկայությունը
- Համայնքային և միջհամայնքային ճանապարհի առկայությունը
- Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը և լավ վիճակը
- Ոռոգման ներհամայնքային համակարգի առկայությունը և լավ վիճակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Մշակույթ կենտրոնի վթարային վիճակը
- Ներհամայնքային երկրորդական և ծայրամասային ճանապարհների, փողոցների վատ վիճակը
- Գործազրկության բարձր մակարդակի հետևանքով տարեցտարի բնակչության արտագաղթը` իր բոլոր բացասական հետևանքներով
- Նոր ձևավորվող բնակելի թաղամասերում ենթակառուցվածքների` էներգոմատակարարման, գազամատակարարման, խմելու և ոռոգման համակարգերի բացակայությունը
- Կոյուղու բացակայությունը
- Միջբնակավայրային հասարակական տրանսպորտի բացակայությունը` ապահովելու մշտական հաղորդակցությունը մարզկենտրոնի հետ
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներ իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաթիվ խնդիրների ու դժվարությունների առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները` կապված համայնքի սեփականություն հանդիսացող հողային, գույքային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ
- Համայնքի տարածքում նպաստել գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը` (հատկապես` անասնապահությունը, ինչպես նաև հիմնել ջերմոցային տնտեսություններ)
- գտվելով համայնքի պատմամշակութային արժեքների առկայությունից` նպաստել տուրիզմի զարգացմանը

- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկիր աշխատանքի մեկնելը և չվերադառնալը
- Վտանգավոր բնական երևույթների՝ վարարումների ժամանակահատվածում հնարավոր ջրածածկումների տեղամասերը

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1. Համայնքի զարգացման տեսլականն է՝ Ն. Գետաշեն համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկեցիկ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք: Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի **ռազմավարությունն է՝**

- Համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակի անասնակերի ապահովման միջոցով
- Համայնքում ջերմոցային տնտեսությունների հիմնում և գործարկում
- Ներքնակավայրային ճանապարհների և փողոցների նորոգում ու բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում
- Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում, աղբահանություն ու սանիտարական մաքրում, տրանսպորտ, նախադպրոցական կրթություն, մշակույթ, սոցիալական պաշտպանություն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով:
- Համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համակարգային կարողությունների հզորացում, նրանց գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում
- Նոր աշխատատեղերի ստեղծումով հասնել միգրացիայի նվազմանը և կայունացնել բնակչության թվաքանակը

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով

- Համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքերի և արոտավայրերի նպատակային ու արդյունավետ օգտագործման միջոցով

- Ներքնակավայրային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում

- Համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ոռոգման ու խմելու ջրի համակարգերի շահագործման ու նորոգման միջոցով, աղբահանության ու սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով

համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին ու կազմակերպություններին խրախուսելու միջոցով:

4. ՀՀԶԾ-ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ -ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր: Գործնականում, ՀՀԶԾ -ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

5. ՀՀԶԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը ենթարկվում են մոնիթորինգի, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ կատարել: ՀՀԶԾ -ի ներքին մոնիթորինգը իրականացվում է ՀՀԶԾ և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից կիսամյակը մեկ անգամ: ՀՀԶԾ ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով կներկայացվի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով կներկայացնի համայնքի ավագանուն ի գիտություն: Հանրային քննարկումների արդյունքում ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն լրամշակում է ՀՀԶԾ -ի իրականացման տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում է դրանց վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթեթերը և տեղեկանքը) և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը ՀՀԶԾ -ի իրականացման տարեկան հաշվետվության լրամշակված նախագիծը և դրան կից փաստաթղթերը ներկայացնում է ավագանու քննարկմանը ու որոշման կայացմանը:

ՀՀԶԾ- ի վերանայումը

Հիմնվելով ՀՀԶԾ -ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման հիման վրա՝ ՀՀԶԾ -ի վերանայման անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարը ՀՀԶԾ -ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և/կամ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները կներկայացնի ավագանու քննարկմանը և հաստատմանը: Համայնքի ավագանու անդամների առաջարկված այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀՀԶԾ -ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշումն ընդունվում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստի ներկա անդամների ձայների երկու երրորդով: ՀՀԶԾ -ի փոփոխությունները և (կամ) լրացումները ավագանու հաստատումից հետո հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Ն. Գետաշեն համայնքի սույն զարգացման ծրագիրը իրականացվելու է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, աշխատակազմի, համայնքային ենթակայության

կազմակերպությունների կողմից՝ բնակիչների մասնակցությամբ:
Համայնքի 2019-2023թթ. ՀՀԶԾ -ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված
կլինի համայնքի առաջիկա երկու տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝
սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու
արդյունավետ ծախսումից:

ՀՀԶԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված է կլինի նաև այն հանգամանքից, թե
համայնքի ՏԻՄ-երին որքանով կհաջողվի նպատակային և չափազանց արդյունավետ
համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների
(հատկապես՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի), ՀՀ-ում(մասնավորապես՝ ՀՀ Գեղարքունիքի
մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր, ՔՀՄՀ կազմա- կերպությունների և խմբերի,
գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀՀԶԾ -ով պլանավորված
ներդրումները և միջոցները:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Ոռոգման ջրի ցանցի վերանորոգում » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	կնպաստի գյուղատնտեսական աշխատանքների զարգացմանը, տնամերձ հողամասերի մշակմանը, բանջարաբոստանային կուլտուրաների ցանկատարածությունների ավելացմանը և կավելացնի ջրովի հողատարածքները, որի արդյունքում համայնքի բնակչության եկամուտը կավելանա կախված հողատարածքների մշակման ավելացմամբ						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	15.000.000	5.000.0	5.000.0	5.000.0	5.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	<ol style="list-style-type: none"> 1. Կավելանա ջրովի հողատարածքները 2. Բերքատվությունը 3. Մշակվող կուլտուրաների տեսականու ավելացում 						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	15.000.000				
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ol style="list-style-type: none"> 1.1. Կավելանա ջրովի հողատարածքները 1.2. Մշակվող կուլտուրաների տեսականու ավելացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ <ol style="list-style-type: none"> 2.1. 2.2. 						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 15.000.000 Ընդհանուր բյուջեն՝ 35.000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տեխնիկա,						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնակլիմայական պայմաններ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը ընդգրկում է ամբողջ համայնքի բնակելի կառուցապատման գոտին, այն կնպաստի գյուղատնտեսական աշխատանքների զարգացմանը, տնամերձ հողամասերի մշակմանը, բանջարաբոստանային կուլտուրաների ցանկատարածությունների ավելացմանը և կավելացնի ջրովի հողատարածքները, որի արդյունքում համայնքի բնակչության եկամուտը կավելանա կախված հողատարածքների մշակման ավելացմամբ						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Նորակառույց թաղամասերում գազատարների կառուցում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ծրագրի արդյունքում կբարելավվի բնակիչների կենցաղային պայմանները, որը կնպաստի բնակչության առողջ ապրելակերպին:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	5.000.0	3.000.0	3.000.0	3.000.0	3.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			5.000.0				
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նորակառույց թաղամասերի բնակիչները կունենան բնական գազ 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` Կապիտալ ծախսեր` 5.000.000 Ընդհանուր բյուջեն` 17.000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի արդյունքում կբարելավվի բնակիչների կենցաղային պայմանները, որը կնպաստի բնակչության առողջ ապրելակերպին:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Մշակույթի տան վերանորոգում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	<i>Ծրագիրը ընդգրկում է մշակույթի տան դահլիճի վերանորոգումը և համապատասխան գույքի ձեռք բերումը</i>						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	0	0	20.000.0	20.000.0	10.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			0				
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Կբարձրան համայնքի բնակիչների մասնակցությունը մշակույթային միջոցառումներին</p> <p>1.2.</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Բնակչության ազատ ժամանցի կազմակերպումը</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր`</p> <p>Կապիտալ ծախսեր`</p> <p>Ընդհանուր բյուջեն` 50.000.0</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023 թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը ընդգրկում է մշակույթի տան դահլիճի վերանորոգումը և համապատասխան գույքի ձեռք բերումը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ
« Համայնքի ներքին ճանապարհի բարելավում և ասֆալտապատում
»
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատվելուց հետո կդառնան երթևեկությանը և բնակչության համար ավելի արդյունավետ:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	120.000.0	12.000.0	12.000.00	12.000.00	12.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			120.000.0				
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համայնքի բնակչության և աշակերտների սանիտարական պայմանների բարելավում , հաշվի առնելով ճանապարհի անմխիթար վիճակի փոփոխություն: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Մեքենաների անվտանգ շահագործում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` Կապիտալ ծախսեր` 120.000.0 Ընդհանուր բյուջեն` 168.000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ավտոմեքենա, աշխատողներ,						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Թիվ 1 և 2 միջնակարգ դպրոցներ տանող ճանապարհները ասֆալտապատվելուց հետո կդառնան երթևեկությանը և բնակչության համար ավելի արդյունավետ:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Համայնքի փողոցների լուսավորում » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի թվով 10-12 թաղամասերում լուսավորության ցանցի կառուցում:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	15.000.0		0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			15.000.0	6.000.0	6.000.0	5.000.0	5.000.0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Երեկոյան ժամերին փողոցների երթևեկությունը և բնակչության տեղաշարժը դարձնել ավելի անվտանգ:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Բնակչության համար ավելի բարենպաստ միջավայրի ստեղծում</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 15.000.0</p> <p>Ընդհանուր բյուջեն՝</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ավտոմեքենա, աշխատողներ,						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի թվով 10-12 թաղամասերում լուսավորության ցանցի կառուցում:						

Ծ Ր Ա Պ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր

« Նոր մանկապարտեզի կառուցում » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գոյություն ունեցող մանկապարտեզ չի բավարարում նախադպրոցական տարիքի երեխաների պահանջարկը						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			0	0			
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների թվի աճի հետ կապված նոր մանկապարտեզի անհրաժեշտություն:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակություն</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագիրը հնարավոր է իրականացնել պետական միջոցներով կամ բարատերարների ներդրումներով						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գոյություն ունեցող մանկապարտեզ չի բավարարում նախադպրոցական տարիքի երեխաների պահանջարկը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի որոշ թաղամասերում գոյություն ունեցող խմելու ջրի ներքին ցանցը հին է, որը եթակա է վերանորոգման:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	10.000.000		0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			10.000.000	5.000.0	5.000.0	5.000.0	5.000.0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համայնքի բնակչության և աշակերտների սանիտարական պայմանների բարելավում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Խմելու ջրի կորուստների նվազում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` Կապիտալ ծախսեր` 10.000.000 Ընդհանուր բյուջեն` 30.000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Խողովակներ, մեխանիզմներ, աշխատողներ,						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի որոշ թաղամասերում գոյություն ունեցող խմելու ջրի ներքին ցանցը հին է, որը եթակա է վերանորոգման:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Համայնքի գլխավոր հատակագծի ձեռք բերում » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել գլխավոր հատակագիծ:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	0		0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	0	0	5.000.0	5.000.0	5.000.0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համայնքը քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով ապահովել գլխավոր հատակագծով 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. քաղաքաշինական նորմերի պահպանում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` Կապիտալ ծախսեր` Ընդհանուր բյուջեն`						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետական միջոցների ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել գլխավոր հատակագիծ:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Նոր ենենթակայանի տեղադրում » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել գլխավոր հատակագիծ:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	6.000.0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	0	0	0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2018		2019	2020	2021	2022	2023	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համայնքը քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով ապահովել գլխավոր հատակագծով 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. քաղաքաշինական նորմերի պահպանում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 6.000.0 Ընդհանուր բյուջեն՝ 6.000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետական միջոցների ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բնակչությանը էլ. էներգիայով ապահովելը						

